



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՅ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ

30/մայիսի/2023 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու**9**..... անդամներ:

Բացակա էին՝ Վ. Նիսանյան, Զ. Բարսեղյան, Մ. Արարատյան, Մ. Համբարձումյան, Վ. Վահանյան:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, համայնքի գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարներ Արտակ Բագրատյանը և Սևակ Մկրտչյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հավաքագրման և հաշվառման բաժնի պետ Արմինե Ղազարյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ Արսեն Գառնիկյանը:

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանը

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը՝

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական՝ 2023 թվականի մայիսի 30-ի նիստի հետևյալ օրակարգը.

1.1. Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտներ, հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում տեղական տուրք վճարողի կողմից համապատասխան թույլտվություն ստանալուց հետո գործունեությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան չկազմակերպելու և չիրականացնելու դեպքում տեղական տուրք վճարողի նկատմամբ նախագգուշացում կամ թույլտվության կասեցում կամ թույլտվության դադարեցում կիրառելու կարգը սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.3. Ջերմուկ համայնքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու կարգը սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.4. Տեղական տուրքի և (կամ) վճարի արտոնությունների կիրառման համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանք ներկայացնելու կարգը սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.5. Անշարժ գույքի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.6. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 21-ի N 35-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Գնդեվազ գյուղում գտնվող 10-016-0208-0034 կադաստրային ծածկագրով հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ա. Գառնիկյան

1.7. Դրամական օգնություն տրամադրելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնակատար Մ. Մարգարյան

1.8. Ջերմուկ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

զեկ. համայնքի ղեկավար Վ. Արսենյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-----8----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----1-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի, 90-րդ հոդվածի 6-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

1. Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի՝ բաժին 11, խումբ 01, դաս 02, ծրագիր 51, 210002-«ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891-պահուստային միջոցներ» տնտեսագիտական հոդվածը նվազեցնել 1759.0 հազար ՀՀ դրամով. այն ուղղել «02-05-01-պաշտպանություն (այլ դասին չպատկանող)» գործառնական դասակարգման «4657-այլ կապիտալ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածին՝ «Հայաստանի սահմանամերձ համայնքների դիմակայության ամրապնդում և տնտեսական վերականգնում» ծրագրի շրջանակում, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից՝ Վորլդ Վիժն Հայաստանի Մանկական զարգացման Հիմնադրամի, Ռազմավարական զարգացման գործակալության համագործակցությամբ, Շվեցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ իրականացվող Ջերմուկ քաղաքի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոցի թաքստոցի հիմնանորոգման աշխատանքների համաֆինանսավորմանը 15% չափով՝ 1759.0 հազար ՀՀ դրամ. ըստ ներկայացված նախահաշիվ-ծավալաթերթի՝ հիմնանորոգման աշխատանքները կազմում են 11724.6 հազար ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----9----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՉԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՉԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԿԱՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ ԿԱՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Սահմանել Ջերմուկ համայնքի վարչական տարածքում տեղական տուրք վճարող կողմից համապատասխան թույլտվություն ստանալուց հետո գործունեությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան չկազմակերպելու և չիրականացնելու դեպքում տեղական տուրք վճարողի նկատմամբ նախազգուշացում կամ թույլտվության կասեցում կամ թույլտվության դադարեցում կիրառելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46-Ն/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով և 245-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Սահմանել Ջերմուկ համայնքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունիսի 1-ից:

Կողմ՝ 9 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47-Ն/

Լսեցին

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածով՝

1. Սահմանել, որ որ տեղական տուրքի և (կամ) վճարի արտոնությունների կիրառման համար հիմք են ընդունվում հետևյալ փաստաթղթերը՝

1) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական ռեգիստրի գրանցման քաղվածքը.

2) գործունեության իրականացման վայրի՝ շենքի կամ շինության, սեփականության կամ օգտագործման վկայականի պատճենը, բացօթյա առևտրի կազմակերպման դեպքում՝ տարածքի լուսանկարը

3) օրենքով սահմանված գործունեության (գործողությունների) համար համայնքի ղեկավարի կողմից տրված թույլտվության պատճեն

4) համայնքի բյուջեի նկատմամբ պարտավորություններ (բացի արտոնության կիրառման համար հիմք հանդիսացող ժամկետանց պարտավորությունների) չունենալու վերաբերյալ տեղեկանք .

2. Սահմանել տեղական տուրքի և (կամ) վճարի արտոնությունների կիրառման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու կարգը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունիսի 1-ից:

Կողմ-----8----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----1-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48-Ն/

Լսեցին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և 3-րդ մասով, ինչպես նաև Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 30-ի N 48-Ն որոշմամբ՝

1. Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ Սեդրակ Շամիրի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող (վկայական՝ N 11052023-10-0021) և անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղու N 47/43 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակությամբ հողամասի (գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների) անշարժ գույքի հարկի գծով սահմանել արտոնություն՝ ազատելով 2008-2023 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորությունների և հաշվարկված տույժի վճարումից 765916 (յոթ հարյուր վաթսուներեք հազար ինը հարյուր տասնվեց) ՀՀ դրամի չափով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ս. Շ. Ասատրյանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամովին հրաժարվել է նշված հողամասից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----9----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N 35-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 10-016-0208-0034 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող պետական սեփականություն (վկայական՝ 14112019-10-0008) հանդիսացող 10-016-0208-0034 կադաստրային ծածկագրով հողամասը (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ կորիզավոր այգի, մակերեսը՝ 2,12862 հա) գյուղատնտեսական գործունեության իրականացման նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 734500 (յոթ հարյուր երեսունհինգ հազար հինգ հարյուր) դրամ:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի աճուրդային կարգով օտարման ժամանակ հողամասի վարձակալ Դուստրիկ Աղվանի Ալավերդյանն ունի գնման նախապատվության իրավունք:

3. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 21-ի «Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու համաձայնություն տալու մասին» N 35-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----9----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50-Ա/

Լսեցին

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՈՄԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշումն

ուժը կորցրած ճանաչելու մասին» N 52-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկի համայնքի 2023 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից 100 000-ական (հարյուր հազարական) դրամի չափով դրամական օգնություն տրամադրել Ջերմուկ համայնքի բնակիչներ Բելլա Խանամիրյանին, Սարգիս Գրիգորյանին, Վարդան Բայաթյանին, Ավետիք Հակոբյանին և Ռուզաննա Եղիազարյանի, 200 000 (երկու հարյուր հազար) դրամ՝ Սյուզաննա Առաքելյանին, 300 000 (երեք հարյուր հազար) դրամ՝ Թամարա Մելիքյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----09 Դեմ-----0 Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 51-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի հունիսի 30-ին, ժամը՝ 15.00-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	

